

ԱՐՑԱԽԻ ԹԵՄՈՒՄ

ԳԱՆՁԱՍԱՐ

Հոկտեմբերի 1, կիրակի, Վարագա Ս. Խաչ— Այս օրը հավերժորեն մտավ պատմության մեջ որպես Գանձասարի վանքի վերաբացման թվական: Պատմական օր ապրեց ոչ միայն արցախահայությունը, այլև համայն հայ ժողովուրդը և՛ Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս: Մոտ 60-ամյա հարկադրված լռությունից հետո կրկին հնչեց Գանձասարի վանքի զանգը և իր գիրկը կանչեց հավատավոր հայ ժողովրդին՝ հավատք, հույս և սեր բաշխելու:

Այս երջանիկ առիթով Գանձասարի վանքում էին Արցախի թեմի հոգևոր տեսուչ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Գանձասարի վանահայր Միքայել աբղ. Աջապահյանը, ինչպես նաև ուխտավորաբար ժամանած Ամարասի վանքի վանահայր Տ. Վրթանես աբղ. Աբրահամյանը, Մարդակերտի շրջանի հոգևոր հովիվ Տ. Թադեոս քհն. Գևորգյանը և Ասկերանի շրջանի հոգևոր հովիվ Տ. Մկրտիչ քհն. Թովմասյանը: Դեռևս սեպտեմբերի 30-ի երեկոյան սկսված կիրակամտի ժամերգությունից, ինչպես նաև գիշերային հսկման արարողությունից և լվացումներից հետո, հոկտեմբերի 1-ին՝ հետ առավոտյան ժամերգության, ժամը 11-ին սկսվեց Ս. պատարագը: Պատարագիչն էր գեր. Տ. Պարգև եպիսկոպոսը: Թեև Արցախի և Հայաստանի շրջափակումը լուրջ դժվարություններ էր հարուցել Գանձասարի վանք հասնելուն, սակայն, այնուամենայնիվ, դեպի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին էին ձգվում բազմահարյուր հայեր ինչպես Արցախից, այնպես էլ մայր Հայաստանից:

«Հայր մեր»-ից առաջ, խուռներամ բազմության ներկայությամբ պատարագիչ սրբազանը ոգեշունչ քարոզ խոսեց՝ վեր հանելով օրվա պատմական նշանակությունը ողջ հայ ժողովրդի համար: Սրբազանը արեց նաև բարեմաղթություններ մեր ժողովրդի արդարացի պայքարի մոտալուտ հաղթանակի համար:

Հավարտ Ս. Պատարագի մոտակա Վանք գյուղում Արցախի թեմի հոգևոր դասի, մարզի ղեկավար անձանց, ինչպես նաև ներկաների համար տրվեց ճաշկերույթ, որտեղ խոսված ճառերում բոլորը միահամուռ կերպով պատրաստակամություն հայտնեցին շարունակելու այս սկսված գործը Արցախ աշխարհում:

Վաղ առավոտից մինչև ուշ երեկո շարունակվում էր ուխտավոր ժողովրդի այցը Գանձասար, որտեղ այդ օրը տեղի ունեցան տասնյակ մկրտություններ

ԱՄԱՐԱՍ

Հոկտեմբերի 16, երկուշաբթի, Գյուտ նշխարաց Գրիգորիսի Աղվանից կաթողիկոսի— Այսօր, երկարատև ընդմիջումից հետո առաջին անգամ լինելով, Արցախահայությունը, ինչպես նաև Հայաստանից և սփյուռքից ժամանած հյուրերը՝ ավելի քան 500 հոգի, արհամարհելով շարունակվող շրջափակման հարուցած դժվարությունները, Արցախի թեմի հոգևոր տեսուչ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանի գլխավորությամբ ուխտի գնացին Ամարասի վանք՝ խոնարհվելու մեծ սրբի նշխարների առջև և աղոթելու Հայաստան աշխարհի և հայ ժողովրդի պայծառության համար:

Այստեղ գերաշնորհ սրբազան հոր, ինչպես նաև Գանձասարի վանահայր Տ. Միքայել աբղ. Աջապահյանի և Ասկերանի շրջանի հոգևոր հովիվ Տ. Մկրտիչ քհն. Թովմասյանի մասնակցությամբ կատարվեց առավոտյան ժամերգություն, որից հետո Գանձասարի վանքի քառաձայն երգչախումբը (խմբավար՝ Արկադի Բարսեղյան) մեծ ոգևորությամբ կատարեց հատվածներ Մ. Եկմալյանի պատարագից: Ապա տեղի ունեցավ Ս. Պասկի օրհնություն և 12 անձանց մկրտություն: Մինչև երեկո շարունակվեց ժողովրդական տոնախմբությունը Ամարասի վանքի հինավուրց պարիսպների շուրջ:

ԹՂԹԱԿԻՑ